

Ածային. ի լուսաւորութի. մանկանց եկեղեցոյ որ-
դոց վերին սիոնի. որով յաւէտ փարթամանան անձինք
իմաստնոց, որ եթող զայս ածային. արձանագրութի.
անմահ յիշատակ անձին իւրոյ: Որում յոգնատենչ ըզ-
ձիւք բաղձացեալ քաջանճար փիլիսոփայն եւ բանի-
րուն ճարտարն միջամուխ մակացուն Ածայնոց. տա-
ռից, Ածիմաս(տ). եւ տիեզերալոյս բարունապետն Ե-
սայի. որ ի նուազեալ ժամանակիս առաքինասէր վա-
րուք պայծառացեալ եւ Ածաշունչ. կտակարանացն ի-
մաստիւք գերալրացեալ իրեւ զարեգակն փայլէր յաշ-
խարհի. որ եւ ի վերայ ամ. մասանցն բարեաց, որով
բոլորն կատարի առաքինութի. եւ զուսուցչապետու-
թեն.* եւս զգործ ի կիր արկեալ ընդառնելն լծակցե-
լով: եւ զամ. եկեալսն առ ինքն յԱծայինն. ուղղէր ճա-
նապարհ. աղբիւրաբար բխելով զհոգւոյն սրբոյ
վղպտութիս. ի լսելիս աշակերտելոցն: զոր տր. Յս.
չնորհեցէ զսա եկեղեցոյ սրբոյ ընդ երկայն ժամանակս
խաղաղական կենաւ: Որոյ կցորդեալ կամացն բարե-
սէր յաւթարութի. եւ ձեռնառն օթանդակութի. հոգ-
ւոյն չնորհաւ ծաղկեալ սրբազան եւ ածապատուեալ.
արհիկապոսն. տր. Յովաննէս, որ ունէր զվերատե-
սութի. այցելականն զիտման քահանայականն զասու
կատարողապետութե. Այրարատեան նահանկիս. նիստ
կայանի ունելով զամուրն Բջնի, որ էր ամ. առաքի-
նութի. զարդարեալ: զորս խնամքն Այ. պահեսցէ զնա
խաղաղական կենօք, չնորհելով եկեղեցոյ սրբոյ ընդ
երկայն աւուրս: բայց առաջին սկիզբն դրութե. սորա
եղեւ ի դաւառին Վայոյ ձոր կոչեցեալ. ի սր. եւ ի
գերահռչակ ուխտն Գլաձոր անուանեալ, որ է երկրորդ
Աթէնս: ձեռամբ ուրումն սրբազան քահանայի առն
իմաստնոյ եւ ճարտարի որ է ամ. ածաշունչ. կտակա-
րանաւքն վարժեալ. սպասաւոր գոլով բանի մերձ ի կա-
տարելութի., Յովհաննէս անուն. որ էր ի հոգեակաւոր
քաղաքէն Եզնիկայ կոչեցեալ. արդ զկէս մեկնչի սաղ-
մոսիս գրեաց սոյն այր: եւ ապա սակաւ ինչ այլ ոմն
Վարդան անուն ի նահանկէն Կիլիկիոյ. զորոց զվարձս
հատուցէ տր.: եւ ապա ըստ պատահման ինչ դիպե-
ցաւ վեր յիշեցեալ բարունապետին եւանել յիւրոյն կա-
յանէ եւ երթեալ շրջէր յԱյրարատեան դաւառն ի վա-
նորայն, որ յայնմ նահանկի աղաւթից պատճառաւ:
եւ զամ մի ողջոյն այսր անդր շրջեալ դառնա վերստին
ի Վայոյ ձոր յիւրն մենաստան: եւ հրամայեաց** իմում
անարժանութեա. զպակասն ի յերկուցն գրչաց, որք
նախ քան զմեզ գրեցին, զթերին մնացեալ ի նոցանէ
լնուլ, զոր եւ յանձն առեալ գրեցի փցուն մատամբ եւ
անարհեստ գրչաւ. որպէս եւ ի ստորակայէս յայտ ե-
րեւակ ցուցանի: արդ ոչ եթէ իբրու ճարտար գոլով
յարհեստ գրչութե. յանձնապատան համարձակութի.
ձեռնամուխ եղէ ի գործ որ ի վեր էր քան զկարն իմ.
այլ ի յոլով խնամս վայելեալ նախայիշեցեալ սր. բա-
րունապետին, եւ անիճահ վարկուցեալ զանց առնել

զպատկառեցուցիչ հրամանաւ նորին. զխարխիս յուսոյն
յԱծ. ընկենլով ձեռն ի գործ արկի: Եւ եղեւ աւարտ
գրչութե. սորա յԱյրարատեան նահանկիս յԱծրեալ.
եւ ի գերահռչակ սր. ուխտս Թեղենեաց ընդ հովանեաւ
մաւրս լուսոյ եւ սրբոյ կաթողիկէիս եւ այլ Ածակիր.
նշանացս: ձեռամբ թարմատար եւ անարհեստ գրչի
Մկրտիչ կոչեցեալ, անուամբ միայն բարբի, ի սոյն
անապատէ, եւ հրեշտակակրան եղբարքս սիրով սպա-
սաւորէին մեզ. եւս առաւել հոգեւոր հայ(ր)ս* Դա-
ւիթ, որ էր առաջնորդ սր. ուխտիս, որք լցին զամ.
պէտս կարեաց մեր (որոց տրիտուր հատուցմանն ի տէ.
պարզեւեսցի),** զորս խնամքն Այ. հաստատուն եւ
անշարժ պահեսցէ զմիաբանութիս. զայս մինչ ի միւ-
սանգամ գալուստն իւր սր.:

Եւ էր շրջադալութի. ամանակաց ի թուարբրութե.
հայկապեանս տոմարի յարարարդեալ ամաց հինկետա-
սան յիսնեկաց ընդ միակի շարամանելոյ: Յորում ժա-
մանակի ունէր զաթոռ հայրապետութե. հայոց տր.
Գրիգորիոս. մակ յորջորջեալ Անապարդեցի, որ էր հա-
մանուն սրբոյ Լուսաւորիչին մերոյ. այր մեծիմաստ
եւ յոքնահանճար: ի բոնակալութե. կողմանցս արեւե-
լից բաժնին Ասիոյ, ի վերա յոլովից տիրեալ աղպաց
խուժաղուժ եւ բարբարոս աղբիւն նետողաց, որոց զլիա-
ւորին անուն Ղազան կոչի: ընդ սոցա գրաւեալ ծա-
ռալութի. ծանրադոյն լծոյ հարկապահանջութե. յո-
քունց աղանց. եւս առաւել տունս հայոց, որպէս եր-
բեմն ինչ. ի ժամանակս անիշխանութեն.: ի սոյն ա-
մանակի վարէր զառաջնորդութի. թագաւորութեն. Կի-
լիկիոյ Հեթում որդի Լեւոնի, այր Ածապէր. եւ հեզ-
հոգի, կատարեալ ամ. բարեացն արդասիւք, զոր
խնամքն Այ. պահեսցէ խաղաղական կենաւք հանդերձ
հարադատովքն իւրովք: որ էր եւ նա մտեալ ընդ վերա-
սացեալս հարկաւ: Արդ աղաչեմ զամենայն պատահ-
եալսք սրբոյ մատենիս, որ աւքտիք ի սմանէ ընթեռն-
լով կամ աւերինակելով, յիշեսցիք ի մաքրամատոյց ա-
ղաւթս ձեր զվերադրեալս ի սմա զհոգէհանճար եւ զգե-
րիմաստ բար(ուն)ապետն իմ եւ զհայրն հոգեւոր զԵսաի-
աս (զստացող սր. կտակիս),*** զոր տր. Յս. խաղաղական
կենաւք պահեսցէ զնա յաստիս. եւ զկնի ելիցն յաշխար-
հէ ի դասս սրբոց վարդապետացն ընկալցի ի խորանսն
լուսեղէնս եւ անթառամ պսակաւքն պսակեցէ հան-
դերձ ծնողօք իւրովք եւ ամ. արեան մերձաւորաւք յա-
րազուարճ բերկրիլ յանտրտում ուրախութիւն: Եւս ա-
ռաւել զհոգեւոր հայր սորին եւ զվարժապետն Ածային.
իմաստիւք, զայրն Ածաղգեաց. եւ երանաշնորհ զտե-
մարանն Ածային. զանձուցն զհոգեկիր բարապետն.
Ներսէս զհանգուցեալն առ Քս., զի կայանս իմանալ-
եացն ընկալցի զնա ընդ որդիս անդրանկաց վերին
սիովնի, ընդ նոսին պարել զիմանալի գեղապարութիւն.:
զոր աղաչեմ յիշման բարեոյ արժանի առնել ի մաքուր

*Ձ-ում «հայս»:

**Ձ-ի Լուսանցում աւելացրած, նոյն գրչով:
(փակագծի միջինը):

***Լուսանցում գրուած փակագծինը:

*Այստեղից սկսած մինչեւ հետեւեալ աստղանիշը
տես պատկ. 204.

**Մինչեւ այստեղ տ. պատկ. 204: